



U. S. U. P. U. S. 2

Brilliant — 7P20.6 dPhi. 1886 SubPhi dPhi. 010811160 30

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ԱՐԵՔՈԱՆԴՐՈՅՆ ԵԿ ՀԱՊԱՄԲ, — ՀՐՎԵՑ ՀԱՄԱՅՐԵ ԱՐԵԿՈՏԵԱԿ
ՔՈՎԱՅԻՐԹՈՒԹԵԱԿ ԽՈՅՐԵՎՈՎԱՅԻՐԵՐԱԿ:

$$\left(\text{U} \rightarrow \text{F} \rightarrow \text{N} \rightarrow \text{F} \rightarrow \text{U} \right) \rightarrow \text{U} \rightarrow \text{F} \rightarrow \text{N} \rightarrow \text{F} \rightarrow \text{U}$$

Արեմոքում հրէական աշխարհի մայրաքաղաքը - Եթէ կարիքի է այսպէս ասել — Աղէքսանդրիան էր: Ճշմարիտ է, թէև Անտիոքը Պաղեստինին աւելի մօտ էր և նորա հրէայ ազգարնակութիւնը նոյնքան բազմաթիւ էր: որքան և Աղէքսանդրիայում՝ սակայն արեմոնեան հրէութեան հարստութիւնն ու փարթամութիւնը, մտաւոր ոյժն ու աղդեցութիւնը կենարոնացած էր Փարաւոնների երկրի նոր մայրաքաղաքում: Յունաստանն այդ ժամանակ Ներկայանութեր մարգու աչքին անցած զնացած օրերի մի երկիր: ուր զիստ մեր միայն զիտութեան երկրագագու մորդը, ճանաչելով նորան զեղեցկութեան և արուեստի հայրենիք, մտաւոր կարողութեան և բանաստեղծութեան ի հնուց սրբագործեալ տաճար: Բայց նա այդ ժամանակ աւերակներով ու փլատակներով էր ծածկուած, ուր զասական Յութեանց միշտակարանների վրայ ծածանութեին անդ ու անդաստան: Հին յոյները նշանաւոր կերպով զատարկացեալ և լքեալ, զարձել էին առեւտրական ժողովուրդ և խիստ մրցութեին հրէաների հետ: Հովիմեական պետութիւնը հարթ հաւասարել էր

հին երկիրը և նորա վերայ եղած ժողովրդական զանազանութիւնները, Սակայն այդպէս չէր հետու արեւելքում, այդպէս չէր Եղիպտոսում, Եղիպտոսն այն երկիրը չէր, որ կարողանացին բազմամարդ բնակիչներով լցնել կամ վատամութիւնը բնութիւնն իսկ խոչընդուն էին կանգնած այս մարի ու ցանկութեան իրագործմանը, նա որպէս այժմ՝ գեռ աւելի քան այժմ, Ճանապարհորդի աշքին երեսումեր ցնորդի և հրապուրանքի երկիր։ Հին, խորհրդակիր նեղուը տակաւին այն ժամանակ ևս վարում ածում էր իւր փրկարար ջուրը կապուտակ ծովը, և այնտեղ—որպէս կարծումէին մարդիկ—աշքի տեսութեան սահմանից շատ հետուն նա փոխումէր իւր համը, նորա ջրերի վերայ մոկայկով կամ նաւով զրօննելը, նորա ծանծաղուտքի վերայ տարօրինակ բռւսական և կենդանական թագաւորութեանց անձնատոր լինելը այդ ջրերի անվերջ ու անապատում անհետանալուն ուշագիր լինելը, ահազին յիշատակարանների ստուերի և վիթխարի մեհեանների զիթեական ծառուղիների մէջ ճեմելը, խորհրդաւոր սրբազնազրելի (յերողլիֆ) միտրը հասկանալու համար խորհրդածութեանց մէջ լնկղմիլը, ժողովրդի բարուց նմանութիւնը հին բնակիչների բարուց հետ համեմատելը, հին կրօնի ձեռքը զննութեան առնելը — այս ամենն արգարե մարդու քաշում զցումէին հին, ի վաղուց հետէ անցած գնացած աշխարհի մէջ, զգացմունք զիթուղ ցնորդների և երեւակայտութիւն շլացնող փառաշեղութեանց մէջ, թէ ինչպիսի զիթեական ազգեցութիւն է ունեցել Եղիպտոսը հոռմայեցիների վերայ այդ կարելի է իմանալ գունաւոր քարերից կազմած նկարներից (մուսին, մոզայիկ) և տամնուկ, թաց ձեփի վերայ սրած նկարներից (Փրէսկօ)։

Առ վայր մի ենթազրենք թէ զտնկումներ խոր ծովի վերայ և սլանում մօտենում Աղեքսանզրից նաւահանգւտին, որ ասիտական և ափրիկուկան ափերի ամրողջ տարածութեան վերայ միակ յուսալի տեղի ապահնի էր համարվում։ Հորիզոնի վերայ աստղի նման փոյլումէ զեռ երեսուն մզւն հեռության Փարոս կղզու վերայ նշանաւոր հորուսակ, որ ամրագատկով միացած էր Աղեքսանզրից հետ։ այդ այն վիթխարի փարոսն է, որ հիմքից մինչեւ մէջ տեղը քառանիկիւնի մէջտեղից ի վեր ութին անկիւնի և զագաթի մօտ րողորշի ձև ունէր։ Այս նշանաւոր շինութեան վերջին վերանորոգումն եղաւ 1303 թուին մարմարոնի քարերից։ Փարոս կղզու սրմաւինեաց ծառուղիները մերթ երեսումն մեր աշքին, մերթ անհետանում, — և խարսխի շառաշն ու թնդիւնը մեզ ասումն, թէ որդէն ափումն ենք։ Ի՞նչպիսի բազմութիւն ամեն տեսակ ազգութեանց պատկանող բազմատեսակ նաւերի, որպիսի՛ ժիոր ժողովրդի բազմութեան որպիսի՛ բարելոն լեզուաց, Տէր Աստուած, ի՞նչպիսի խառնուրդ հին և նոր աշխարհաց, ի՞նչ բազմոզանութիւն ապրանքների, որք հաւարուած են դէզ առ դէզ կամ բարձած։ — Աղեքսանզրիան ո՛չ թէ հին, այլ համեմատաբար եղիպտական նոր քաղաք էր նա և Եղիպտոսումն էր և—ո՛չ։ Կորո մէջ ամենայն ինչ իւր յատուկ կիրքն ու առանձնայատկութիւնն ունէր։ և՝ քաղաքը, և՝ նորա բնակիչը

ները, և՝ հասարակական կեանքը, և՝ արուեստն ու զուարձութիւնները, և՝ գրականութիւնը, և՝ գիտութիւնը, ի մի բան՝ ամենայն ինչ իւր առանձ նայատկութիւնն ունէր, նցն խկ տեղադրութեան ձեւը։ Զունենալով ոչինչ լուգնարոյս, բայց իւր մէջ լովանդակելով բոլորը, ինչ որ սրտազրի կարող էր հին աշխարհը կամ ինչ որ գոյութիւն ունէր այն ժամանակ—Աղեքսանդրիան գրիան եղաւ ամենայարմար տեղի, ուր պէտքէ հրեական հելլենականութիւնը իւր շահաստանը որոնէր։

Քաղաքն, ինչպէս արգէն ցցց է տալիս նորա անունը, Աղեքսանդր Մեծի հիմնածն է, նա շինուած էր բաց հովահարի կամ աւելի ճիշտ՝ մակեդոնացի հեծեալի բաց վերաբերութ ձեւով։ Իւր ամրողջ զրութեամբ Հոռովմի 3160 քայլ բարձր էր, բայց նորա տներն այնքան սեղմուած և բազմայարկ չէին որպէս Հոռովմում։ Նա ներկայանումէր ամենքի աշքին որպէս մի մեծ քաղաք, երբ Հոռովմ տակաւին աննշան էր, և մինչեւ վիրջը կայսերական մէջ երկրորդ տեղն էր բոնում։ Քաղաքն ունէր հինգ թաղ, որոնք անուանվումէին ալփարէտի սկզբի հինգ տառերով։ Նոցանից մէկն ամրողջովին ծածկուած էր արքայական պալատներով ու պարտէզներով և հանգոյն պալատանց շինութիւններով, ոյդտեղ էր արքունական շիրմը։ մակղօլէյ^{*}), ուր ապակեայ դագաղում պահպանմէր Աղեքսանդր Մեծի զին մեղրի մէջ դրած։ Բայց այս շինութիւններն ու երեք փարսախանոց սիւնը զիսաւոր փողոցի վերայ այդ քաղաքի ճարտարապետական հոյակապ զարդարանքների մի մասն էին միայն կազմում։ որ լցուած էր գեղեցիկ ապարաններով։ Նորա բնակիչների թիւը հասնումէր համարեա մի միլիոնի, որոնք թափուել էին այնտեղ արեւելքից ու արևմուտքից պատճառ՝ նորա տուր և առը հարսաւութիւնը ուսումնական պարագմանց յարմարութիւնը։ Նաև այդ ունայնութեան նշանաւոր քաղաքի զրօսավայրերն ամենին ձգումէին այդ տեղ։ Ահա թէ ինչո՞ւ բնակիչների տարբինակ խառնուրդը մարդու ապշեցնումէր։

Աղեքսանդրիայում միանումէին երեք ցամաքներ՝ Աւրոպան, Ասիան և Աֆրիկան, գորա իրանց հարսաւութիւնը կամ բերում զիզում էին այստեղ կամ այստեղից արտահանում։ Նա զիսաւորապէս վաճառականական քաղաք էր, որ ունէր մի գեղեցիկ նաւահանգիստ կամ աւելի ճիշտ հինգ նաւահանգիստ։ Յատուկ որոշուած նաւատօրմիջ կար, որ Աղեքսանդրիայից Հռոմ էր տանում Ագիպտոսում հաւաքռուած հացի երկու տասներորդ մասը իրեւ հարկ, որ տարւոյ չորս ամիսը (¼, մասը) կարող էր բաւականութիւն տալ մայրաքաղաքին։ Դա մի մեծ նաւախումը էր որի մէջ կային թեթե, արագընթաց նաւակներ և ահագին մած հացարած նաւեր, որոնք

(*) Մակղօլէյ են անուանվում ամեն մի գեղեցիկ շիրմներ, ոյս բառը առնուած է Կարիացւոց թագաւոր Մակղօլի անունից։ Մակղօլի ամսւակնը Գալիկարնասում իւր մարգու համար մի գեղեցիկ շիրմ շինել տուեց, որից առնուած, ամեն մի գեղեցիկ շիրմ ալգապէս են անուանվում։

իրու մէկն իւրեանց մասնաւոր նաւազրօշը և որոնց գալստեանը Պատիզա-
սում աւելի մեծ անհամբերութեամբ և չետարձրութեամբ էին սպասում,
քան այժմ ակնկալումն ո՛ւ և է ովկանական շղթենաւի: Աղեքսանդրիայից
մինչեւ Պատիզոս ճանապարհը տեսում էր միջին թւով ասսեհրկու օր, ոյզ ժա-
մանակ էլ նաւը գագար էր առնում Մայլտայի վերայ և Սիկիլիայում: Այդ
պիսի մի նաւով, որ ցորեան էր տանում, Մալտայից Պատիզոս ուղեւորվեցու
Պողոս առարեալը: Այս նաւերն իւրեանց ցուոկի երկու կողմերում ունեցին
այն չափառութեան նկարեն դրուազները: որոնց Նորիուածէին նորա: Նոցու
վարումէին Եղիպտոսի նաւաստիները: որոնց հմտութիւնը յոյցտնի էր ամ-
րող աշխարհին: Այսպիսի նաւերից մէկի նկարագրութեան մէջ ասուած է,
թէ նա ունէր 180 կանգուն երկայնութիւն, 45 կանգուն լայնութիւն և
իւր մէջ կարող էր պարունակել 1575 տօննա (մէկ տօննան հաշվում 600 փ.): այդ նաւը իւրաքանչիւր տարի իւր տիրոջը վաստակ էր բերում
30,000 բուրլ: Ասկայն եթէ այս նաւերը համեմատենք այն նաւերի հետ,
որոնք շինվումէին մորմարինի մեծամեծ կտորներ, սիւներ և կոթողներ
առկաթիսիելու համար զեւ շատ փոքր են: Ինչպէս հաւատացնումն այդ
նաւերից մէկը բացի կորողից կրումէր 1200 ուղեղներ: բամբակի պըզ-
պեղի բորակի քաթանի (կանեփ) հակեր և մեծ քանակութեամբ ցորեան:
Հետկաստանի առևտուրը գտնվումէր Աղեքսանդրիայի ձեռին:
Այդ ճանապարհորդութիւնը տեսումէր մօտ երեք ամիս և լինումէր կամ
Նեղոսի վերայով ի վեր, այնտեղից էլ կարաւանով և վերջապէս ծովով և
կամ, որ շատ հաւատական է, Պաղոմեան ջրանցքով ու Կարմիր ծովով:
Միայն առևտուրը Պաղոմեանց ժամանակից վեց անգամ աւելի էր
զարգացել ու ընդարձակուել: Տեղական արտահանութիւնն էլ աննշան չէր:
Անէին քաթանից շինած զանազան տպրանքներ, որ ամեն երկացու ճաշակին
բաւականութիւն տալու յարմարութիւն ունէին: բրդեղեններ, որ պէս պէս
գոյներ ունէին և երրեմն զարդարուած էին լինում նկարներով ու տեսարան-
ներով, ամեն տեսակ գունի ու ձեփ ապակիներ, ամենալավ թղթմից սկսած
ամենալաւ: Նուրբ և մաքուր տեսակները: Ծաղիկներից ու բուսերից հանած
հոտաւէտ օծանելիք: — դոքա էին տեղական արդիւնահանութեան նիւթերը:
Նորա բնակեցները մեծ հակումն անէին պարապորդ կեանք անցնելու: Ինչ-
պէս Աղրիանո կացորը ասումէր, Աղեքսանդրիան այն քաղաքն էր, որ
փողը ժողովրդի աստուածն էր համարվում: Այստեղ ամեն ոք աշխատումէր
իւր ընկերից յառաջ անցնել կամ զէմ նորա մօտ յառաջադէմ երեալ: Փո-
ղոցային մորացիկն էլ որի ձեռքը բաւականին փողէր ընկնում: միշտ պան-
գոկ էր զնում: թարմ և ապիտած ձկնեղէնը սիստորով ու պուղդիկով հա-
մամում, փառաւորապէս ճաշակում: վերայից էլ եղիպտական սիրելի գա-
րեջուրը անուշանում ու գնում: Աթէ աղքատի կեանքն այդպէս էր ապա
ինչպիսի կեանք կարող էր և պէտք անցներ այն միլիոնատէրը: որ քաղաքի
միջի պալատից զատ՝ Աղեքսանդրիան Կանորայի հետ միացնող ջրանքի վե-
րայ էլ դաստակերտ ունէր: Ամեն տեսակ ազգայնութեան պատկանող ժո-

դոգուում էլ կար այնուեղ, մի սարսափելի բազմութիւն էլ, որ լցնում էր փողոցն ու վաճառառեղիները, որը՝ ըստ ժամանակակից կատակի՝ ամեն բան կարելի էր ձեռք բերել, բացի ձխնից։ Եսաւ նաւահանգստի մօտ — այդտեղ ինկ որ անհնալ էր նոցա թիւն ու համարն իմանալ, Շատ դեղեցիկ էին հոգ ու զով սուսերավոյցը երր, առանձնութեան սիրուն տեղերը, ընդարձակ ապարանները։ Միթէ կարելի է մոռանալ ու չը յիշել հոյակապ մասնագորաններ, որ Աղեքսանդրիոյ ուսումնականներն ու դիտունները ժողովումէին և դիտութեան մատչելի ձիւղերը սովորեցնում և որ մեծ հոչակ ունեցող և յարդանք վայելող բժիշկներն իրանց փրկարար զեղեցին ու խորհուրդը տալիս էին Խտալից ամեն անկիւնից այստեղ թափուղ թորախով ախտացեալներն ու հիւանդներին։ Վենչափիսի ունայնութիւն, աղմուկ ու ժխոր էր տիրում այս մշտագրգիռ, դատարկախօս, ինքնարաւական, սնամիսու, զուարձասէր ամրոխի մէջ, որի ամենարարձ զուարձութիւնն ու րաւականութիւնը թէատրոնն ու երգիչներն էին, Աքանչելի էին այն ակատրակները, որ շրջապատած էին զէպի Ամերա տանող երկար ջրանցքի վերաց գտնուած զարդարուն հիւրանոցներով, այդ այն ջրանցքն էր, որի վերաց լուզացող մակուկների մէջ միշտ լցուած էին լինում րաւականութիւն որպնոց կենցաղասէր մարդկէ և ստուերաշատ տեղերում կամ վայելչական ժամեր անցնում և կամ Կանորա շտապում։ այդ այն շոայլութեան ու ճոխութեան տհամբաններն էին որ այն ժամանակ էլ զարմաների ու խօսակցութեան առարկայ ու նիւթ էին զարձել շատերի համար։ Եւ շընայելով զորան, այդտեղից ոչ այնքան հետի Մարիոտիս կղզու ափերի վերաց կարծես աւելի աչքի ընկնող խիստ հակապատիեր ներկայացնելու համար՝ դանցում էին հրեական խստակեաց ճղնաւորական դասին պատկանողների, թէրապէֆթների *) մեկուսացած բնակութիւնները, որոնց հայեացքներն ու վարած կեանքը շատ կետերում նման էին յիսսէեանների հայեացքին ու կեանքին։

Աղեքսանդրիոյ այս համառօտ ներկապին այն օդուտն անի որ՝ ծանօթանալով նորա հետ, մինք կարող կը լինենք լաւ հասկանալ, թէ ինչո՞ւ եկիստական մայրաբաղարի շրջակայքում հրեաների մեծ բազմութիւն էր բնակվում։ Արկրի բնակիչների ընդհանուր թուի մի ուժներորդ մասը հրեաներն էին կամ նորանից էլ առաջ հրեից զաղթականութիւն եղել էր զէպի եղիստառս թէ ոչ—այդ թողնենք, միայն Աղեքսանդր Աեծը բազմաթիւ հրեաներ իւրեանց երկրից հանեց ու բերեց այստեղ, որոնց մի և նոյն իրաւունքները շնորհեց ինչ որ մակեղունացներն ունէին։ Խարւոց թագաւորների ժամանակ, աւելի վերջին միջոցներում Պաղեստինի շփոթների պատճառով զաղթականների թիւը նշանաւոր կերպով շատացաւ, մանաւանդ այն

(*) Գլեւպէր թէրապէֆթներին եղիստացի է Համարում։ (Տես Արիստոկրէս Առաջ Արգամանն)։

պատճառով որ Պաղովմեանք միշտ հովանաւորութիւննոցա (բացի մի զէպքից): Նախ և առաջ քաղաքի մէջ բնակութիւն հաստատելու համար հրեաներին յատուկ թաղ էր նշանակուած, զա էր արևելեաննաւահանգստի գետաքերանը և Կանորեան ջրանցքի մերձակայքը. պյտպէս էին արել հաւանակարար նորա համար, որ սցդ համայնքը հեռու պահեն հաղորդակցութիւնից, նաև երեխ այն պատճառով, որ նոքա շատ պիտանի և հարկաւոր էին վաճառականութեան համար: Պաղոմեանց առատածեռնած արտօնութիւնները վերջերում Յուլիոս Ահաւր հաստատեց և աւելացրեց: Հացի արտահանութիւնն անցաւ. նոցա ձեռքը և նաւահանգստի ու գետի ոստիկանութիւնը. վերահայեցողութիւնը յանձնեցին նոցա, Քաղաքի մէջ երկու թաղ հրեց թաղ էին անուանվում, սակայն ոչ այն մարզի, որ նորա միայն դոցա մէջ էին սահմանափակուած և ուրիշ թաղերում չէին բնակվում: Նոցա ժողովարանները, որ շրջապատած էին ստուերաշատ ծառերով, քաղաքի ամեն մի մասումն էլ գտնվումէին: Քայլ Եղիպատոսում բնակուող հրեաների զիսաւոր փառքն ու պարձանքը, որին նախանձու աչքով էին նայում մինչև անդամ Պաղեստինի հրեաները, նոցա կենտրոնական մեծ ժողովարանն էր, որ շինուած էր արբայական պալատի ձևով, սիւների կրրկնակի շարքերով և այնքան մեծ էր, որ նորա մէջ հեռու անկիւններում կանգնող ազօմտաւորներին պէտքէ նշանով յայտնէին: թէ պատասխանական ազօմքի ժամը հասել է: Վաճառականական զանազան դասակարգի մարդիկ այստեղ ժողովուած լինելով, մի այլ շրջանի անձն կարող էր այստեղ հաւաքուողներից իմանալ, թէ ո՞րտեղ են բնակվում հրեայ իշխանները, տէրերը կամ մշակները: Այս տաճարի գասերում եօմանատուն ալուներ կային: յեսեալ թանկազին քարերից, որոնք շինուած էին այն եօմանատուն աւագանիների համար, որոնք՝ հանգոյն երուսաղէմի մեծ ծերակուտի, կաղմում էին Աղեքսանդրիոյ ծերակայտը:

Զարմնաւոյի և համարեա անբացատրելի է թւում: թէ ի՞նչ պէս Եղիպատոսի հրեաները կարողացան այս բաժանման (սիփզմատիքական) տաճարը շինել: Ասորւոց՝ Պաղեստինում արած սարսափելի հալածանաց ժամանակ Անիա Գ. նահատակուած քահանայապետի օրդի Անիան Եղիպատոս փախչելով, ազատուեցաւ: Պաղոմէս Փիղոպատովիր ո՛չ միայն սիրով ընդունեց նորան, այլ և նուիրեց Ակոնտոպօլիս քաղաքի մէջ առանց զործազրութեան մնացած հեթանոսական մէհեանը, որ հրեաները տաճար դարձնեն: Այստեղ պահտուն էր մատուցանում նոր ահարանեան քահանայութիւնը, որի պահպանութեան համար գործ էր դրվում շրջակայ վիճակի եկամուտքի արդիւնքը: Քայլ այս նոր տաճարը չէր նմանում Երուսաղէմի տաճարին ո՛չ իւր արտաքին տեսքով և ո՛չ իւր ներքին յարմարութիւններով ու հանգերածանքով*): Սկզբում Եղիպատոսի հրեաները շատ էին պարծում ու գոռողա-

(*) Առեղջէն եօմնաջանէեան աշտանակի փոխարէն այստեղ մի ոսկեղէն դամբարեար, որ կախ էր տրած ոսկեալ շղթայից:

նում իրանց նոր տաճարով և բացարձակ առումէին, թէ նոքա գորա մէջ տեսնում մեն Խոսյի մարգարէի կանխասացութիւնը, թէ Եղիպտոսի երկի հինգ քաղաք պէտքէ խօսին Քանանի լեզուով, որոնցից մէկը պէտքէ անուանուի Իրհաշիբէս, որ Եօթանասունք փոխեցին և անուանեցին +ուրածութիւն+ Երանեանց . . . Յաւուր յայնմիկ եղիցին հինգ քաղաք յերկրին Եղիպտոսցուց, որ խօսիցին զքանանացւոց լեզուն և երգնուցուն յանուն Տեառն զարութեանց, քաղաք Ասեգեկ կոչեսցի մի քաղաք (Ես. Փթ. 18). Այս տաճարը գոյութիւն ունէր մերձաւորապէս 160 տարի Յիսուս Քրիստոսից առաջ և իր գոյաթիւնը պահեց մինչև Երուսաղեմի կործանման վերջը՝ նա հազիւ թէ կարողանար մրցել Մորէա լերան վերայ կառուցած տաճարի հետ, քանզի իրանք Եղիպտոսի հրեաներն անդամ Երուսաղէմի տաճարը իրանց կենտրոնական սրբավայրն էին համարում, որ դիմումէին յուխտ և յերկրագութիւն և որին բերումէին իրանց նուերները: —Պաղեստինի բնակիչները Տուն Անիայի: Էին անուանում նորան և Անոնտոպոլսի քահանայութեան իրաւունքը չեին ճանաչում և պնդում էին, թէ նոքա Երուսաղէմի մէջ պաշտօն վարելու իրաւունք չունեին:

Ակոնտոպոլսում մատուցուած զոհերը օրինական չեին համարվում: Այս պայմանական Նախատինքը շատ թշու է երկում, որից կարելի է ենթադրել: Թէ վերեւում առաջ բերած ցուցումը այն ժամանակին է վերաբերում, երբ թէ այս և թէ այն տաճարներն անցեալի սեպհականութիւն և առարկայ էին դարձել:

Եղիպտոսի հրեաները սփռուած էին ամենայն կողմ՝ դէպի հարաւ մինչև Հարեշստան և Նմուգպիա և գէպի արեմուտք մինչև Ափրէնական զաւոր և նորա սահմաններից էլ այն կողմն էին անցնում: Ափրէնիայում նոքա համարվում էին այն չորս գասակարգից մէկը, որոնց վերայ բաժանվումէին նորա բնակիչները: Մի հրեական արձանագիր Աերնիկիայում, որ գրուած է Քրիստոսից 13 տարի առաջ ցցց և տալիս, թէ Ափրէնացի հրեաները կազմում էին առանձին համայնք, որոնց հասարակական գործերը նոյն իսկ իրանց սեպհական ինն կողմէն էին վարում: Դոցա հետ գլուխ ելնելը բաւականին գժուար էր, որովհետեւ կիւրէնացի հրեաները եթէ անհանգիստ բնաւորութեան տէր էլ չեին, այնու ամենայնիւ սաստիկ հակալրում էին հոօմայիցիներին, որոնք բազմցա աշխատումէին նոցա այդ զգացմունքը մարել արիւնով ու որով^(*)): Մի այլ արձա-

(*) Ամենիրին յացտնի է, որ երբ Յիսուս Քրիստոս խաչափայտը կրելիս ճամապարհին վասակեցաւ: Հասվալսայեցիները Աթմէօն Ափրէնացում ստիպեցին բառնալ Նարան: Բնակէս վկայումէ աւետարանէը (Առևկ. 14. 26), եւ այդ բանը Հոռոմայիցիների աշխատմ ոչ թէ պատուի, այլ պատժի ու անպատութեան նշան էր համարվում: Կահեւ ըստ պէտքէ մասանալ եւ այն, որ Քրիստոսից 132—135 տարի յետոյ եղած հրէց վ՛ը թշին ապստամետութիւնը Կիւրէնայում հագեց, որի գլուխը Գերաֆիստոս Բարբոսէրան էր: Թէ ինչպիսի սոսկալի խոշտանդանք կրեցին այդ սուստ քրիստոսին հետեւողները: Պարա մասին աւելորդ է խօսելլը: Այս գէպիքի մասին մեր Վ. կու-

Նազրութիւն ցոյց է տալիս, թէ պանդիտութեան այլ վայրերում նոյնուկն հրեաները իրանց սեպհական ուժուագուշը կամ կառավարիչներն ունեին և հասարակաց աստուածպաշտութեան կատարումը յատկապէս յանձնուած էր արք սինազողին կամ ժողովարանի դլիաւոր կառավարչին։ Հաստապէս չի կարելի ասել, թէ ԱՀուտուղօլսի քահանայապետը Եղիպատուում գտնուած համայնքի (Հրեականիհարիէ) համար երբ և իցէ զլուի կամ պետ համարուած լինի, այդ բարի բուն նշանակութեամբ։ Եզէքստանդրիայում հրեաները գտնվում էին հրեական եռնարխի (Եպնոս) վարչութեան տակ, որի իշխանութիւնը նոյն էր ինչ որ արիստուի իշխանութիւնը անկախ քաղաքներում։ Բայց Նորա իշխանութիւնը Օգոստոս զրեց բոլոր ծերակուտի վերոց Մի այլ հոգմեական պաշտօնեալթիւն էլ կար, որ մի քանի յայտնի պատճառներով յաճախ տալիս էին հրեաներին, այդ արարարի կամ արարարը ի պաշտօնն էր, որ սահմանուած էր արարական ազգաբնակութիւնը կառավարելու համար։ Ըստերի թւամբ՝ այս պաշտօնը վարեց և Փիլօնի եղբար Եզէքստանդրը Եթէ Եղէքսանդրիայի հրեայ հարուստ գերասասանների մասին դատենք այն գիրքն համեմատ, որ ուներ այս արարարը, այն ժամանակ պէտք է ասենք, որ նոցա ազգեցութիւնը շատ նշանաւոր է եղած։ Այս Եղէքսանդրի վիրեան այնքան հարուստ էր, որը ան Արամայի հրեա վաճառականական և նաւային մեծ տունն Անտիոքի մէջ։ Այդ մեծատան համար ոչինչ նշանակութիւն չուներ 70.000 բուրլի (7000 ֆրանս սակերինդ) տալ փոխարինարար Եզէքստանդրիա երբ նա Խտալիս դառնալու ժամանակ վողի հարկաւորութիւն զգաց։ Նորա որդւոց երկուսն ամուսնացել էին Ազրիպատ թագաւորի դստերաց հետ, իսկ երրորդ որդին ուրացման զնով յաջորդարար բարձրացաւ և հասաւ նախ՝ Պազեստինի հաւատարմատարի և վերջը՝ Եզիպտոսի նահանգապետի պաշտօնին։ Կրուսազէմի տաճարն այս հրեայ միլիանաստիրոջ հարստութեան և

բնացին պրոլետ է գրում. Քանզի ի ժամանակի սրբէս ապստամբեցին Հրեաց յԱղքաբանուէ հապմայեցւոց թագուարէ եւ հառւմ պատիրազմ ընդ բուփսի եպարքանի աւաշնորդութեամբ ամէն ուրումն աւազպակի. որոյ անունն էր Ապքուազ, ուղինքն առաեզ որդի. որ էր դործովք չարագործ եւ սպանող. բայց անուամբ իւրաք մեծաբանեալ պրործէր. որդին թէ յերկնից ծովեաց նացա Փրկիչ՝ իրո նիզեւոց եւ գերեաց. ևւ ոմքան սաստկացց զմարտն. մինչեւ ի նա հայելով ի բաց կացին ի հորեւոյ հռավմայեցւոց Ասօրիք եւ Միջադեմք եւ պարոք ամենացն. քանզի Յը եւ լուսեալ. եթէ եմաստ յԱղքաբանու ախտ ուրկութեան. . . . ևւ եղիւ ընդ ոյն ժամանակ հասանել Աղքաբանուի ի Պազեստնէ եւ սատարել զապստամբն պաշտրմամբ ի քաղաքի մի փարք հաւոր յ) բուսապէմ. վասն սրոյ եւ ամենապն աղզին Տըէց հրամայեց մերժել ի հայրենի աշխարհէն. որ եւ ոչ ի բազում պետաստոնէ հայեցացին յԱրուսազէմ. ևւ ինքն շինէր զ) բուսապէմ զաւերեալն ի Վիստիանուէ եւ ի Տիտոսէ եւ յիւրձէ. եւ անուանեաց Եղիոյ յիւր անուն. որդին եւ կոչէրն իսկ Աղքաբանու արեգուն. . . . Դիմք Յէ գլուխու.

առատաձեռնութեան լաւ ապացոյցներ ունի։ Տաճարը տանող ինն աչաղին դոների վերայի ոսկին ու արծաթը այս հրեայ զբամատիրոջ նույրածն էին։

Այդ անշափի հարստութիւնը, որի հետ լծորդուած էր ամրարհաւածութիւն, ինքնահաւանութիւն և բացայայտ արհամարհանք զեպի շրջապատող սնահաւատութիւնը, բնականարար հրեաների դէմ պէտքէ Աղէքսանդրից բնակիչների մէջ ատելութիւն զարթեցնէր։ Հրեաների ծագման, սկզբնական պատմութեան և կրօնի մասին հնարած անհեթեթ զբուածքների մեծ մասը՝ որ Հռոմի փիլիսոփաներն ու պատմիչներն էլ խսկական և իրաւացի էին համարում, իւրեանց ծագումն առել են Եղիպատուում։ Մատենագիրների ամբողջ մի գաս սկսեալ Մանէթուցից (մօտ 250 թ.) իւր համար բան ու գործ էր արել Մովսիսի զրբի մէջ բովանդակած անցքերի վերայ զկծեցոցից զրուածքներ հրատարակելը։ Այս մրուողներից ամենախիզահին էր Ապիովնը (որին Յովուէփոս պատասխանեց), ամբողջ աշխարհին յայտնի խարերան ու ստախօսը՝ որ գրում և ուսուցանում էր ամեն բան մի և նոյն յանդգնութեամբ և սուտակասպասութեամբ։ Նա կատերելապէս յարմարվումէր Աղէքսանդրացոց բնաւորութեանը, որոնց առաջ միշտ կոկողավիդ էր պահում իրան իւր անամօթ համարձակութեամբ։ Հռովմում շուտով ծանօթացան նորան, և Տիբերիոս կայսորը լաւ ճանաչելով այս անսանձ, անձնադով յիզուագարին, անուանեց նորան Յայ— բայ— բայ— ուլիւրէն։ Նա հիտազոտում և տեսնումէր ամենայն ինչ, և մինչեւ անդամ երիցս լսել էր Միմնաս անդից խորհրդաւոր ձոյն, երբ նոր ծագող արեգական ճառագայթները նորա վերայ էին ընկել։ Գոնէ ինքը նոյն իսկ արձանի վերայ այդ բանի համար փորագիր էր արել բոլոր սերնդին յայտնելու համար։ Այդ այն մարդն էր, որին աղէքսանդրացիր մեծ աղատութիւն էին շնորհել իրանց քաղաքի մէջ, որին յանձնել էին կարեւոր գործեր, որին բարձրացրել էին որպէս մի նոր Հռոմերու։ Ապիովնի վայելած ժողովրդական սիրոյ պատճառը մասամբ հրեաների վերայ արած կծու յարձակումներն էին։ Հրեաների պատմութեան ու կրօնի վերաբերութեամբ նորա դրած կատակերգական գրուածները անշէջ էին պահում ժողովրդի մէջ այն ատելութիւնն, արհամարհանքն ու անարգանքը, որ ունէին սոցա զէմ։ Նորա հոգու խորքում բուն գրած խորհուրդն ու նպատակն այն էր, որ աղդի մոլեսանգութիւնը միշտ զրգուած պահէ զեպի հրեաները։ Եւ այսպէս նա ասումէր, թէ իրը հրեաները սովորութիւն ունին ամեն տարի մի թշուառ, աներախտ հելլեն բոնել, մի տարի շարունակ գիրացնել նորան և յետոյ զոհել և մի և նոյն ժամանակ նորա փորոտիքն ուտելով և մարմինը թաղելով, սոսկալի երգումն անել, որ անվերջ թշնամութիւն պահեն յայների զէմ։ Այդա այն մարդիկն են, ասումէր նաւ որ գիրանում են Աղէքսանդրից հաշուով, քաղաքի ամրողջ թաղերին ապօրինարար տէր են գառնում և պահանջումն իրանց համար բացառիկ արտօնութիւններ։ այս մարդիկ յայտնի են մասնչութեամբ։ Նորա աղքատութեան մէջ են ձգում այն ամենին որոնք հաւատ են ընծայում նոցա։ Աթէ հրեաները—բացագանչում էր նա—

Աղեքսանդրից քաղաքացի են, ապա ինչո՞ւ չեն երկրպագում այն առտուածներին, որնց երկրպագութիւն են տալիս Աղեքսանդրացիները։ Եւ եթէ նոքա ցանկանումն կեսարների հօգանաւորութիւնը վայելել, ապա ինչո՞ւ նոցա համար արձաններ չեն կանգնեցնում և աստուածային երկրպագութիւն չեն տալիս նոցա։ Աչա այս և այսպիսի պատճառների համար էր, որ Փիլոնը տրտնջումէր, թէ ինչո՞ւ համար հրեաներն էլ, որպէս մարդ, չըպէտքէ կարողանային ցանկալ, որ իրանց հետ էլ այնպէս վարուեին, որպէս ուրիշ մարդկանց հետ։

Մենք տեսանք արդէն, որ այն հայեացքը, որ հոօմայեցիներն ունեին հրեաների վելայ, գլխաւորապէս ծագել էր աղեքսանդրական աղրիքներից։ Այնու ամսնայինիւ անհասկանալի է, թէ ի՞նչպէս Տացիտ, Կիկերոն կամ Պլինիոսը կարողացան հաւատ ընծայիլ այն անհեթեթ կարծիքն թէ հրեաներն իրանց ծագումն առել են կրէտոյից, ուրկութեան պատճառով արտաքսուած են Նգիպտոսից և այնտեղից գուրս են եկել իրր մի Ռովեկո անունով քահանայի առաջ նորդութեամբ, կամ որպէս թէ նոցա շաբաթական հանդիսան իւր ծագումն առել է այն բանից, որ նոքա իւրեանց վերայի վերբերի կեղեանքը մաքրելու համար պէտքէ իրանց անից տեղից հեռանային։ Իսկ ոյզ ճանապարհորդութեամբ ժամանակի գլխի կամ հրեաներն իրր թէ երկրպագութիւն էին մատուցանում յովանակի գլխի կամ բարումն։ Ա կամ որպէս թէ խողի միս չուտելու սովորութիւնը ծագել էր նորանից, որ անմօնաց էին պահել իրանց ուրկութիւնը, վախենումէին բարուակուց և կամ խողին երկրպագութիւն տալուց։ Այսպիսի և նմանօրինակ ցանցառամտութեանց էին հաւատում հոօմայեցիները։ Լուսաւրիալ հոօմայեցին արհամարհանքով, երբեմն էլ զայրութով էր նայում հրեի վերայ։ Նորա կարծիքով հրեան ենթարկուած լինելով հովմայեցոց իշխանութեանը, կորցրած պէտքէ համարէր և իւր սեպհական կրօնն ունենալու իրաւունքը։ Նորա հասկացողութեամբ՝ քաղաքական կեանքն ու կրօնը միացած էին իրար հետ, ոյլև մէկը միւսի մասն էր կազմում։ « Երաքանչիւր երկիր իւր սեպհական կրօնն ունի—ասումէր Կիկերոն—քանի որ Երուառագէմն անընկճելի էր մնացել, յուգայականութիւնը կարո՞ղ էր ներողամբութիւն պահանջելու իրաւունք զգալ իւր մէջ, բայց միթէ անմահ առտուածները ցցց չը տուին, թէ նոքա ինչպէս են նայում նորա վերայ, երբ որ Յուգայի ցեղն արդէն նուաճուած էր։ Հոռվմայեցի փիլիսոփան կարող էր համակրել ամեն տեսակ հոգեկան անհաւատութիւն նոյնպէս և հաճութեամբ կարող էր հասկանալ աստուածպաշտութեան և սնափառութեան ժողովրդական ձեն ու եղանակը։ Սակայն նա ի՞նչ կարող էր ասել յօգուտ այն աստուածպաշտութեան, որ վերաբերումէր մի բոլորովին անտեսանելի իրի, ամպերին, և երկնքի աստուածացուցման (ինչպէս ինքն էր կարծում)։ Ի՞նչ կարող էր առել Հոռօմ իմաստակը յօգուտ այն աստուածպաշտութեան, որ մերժումէր կրօնի բոլոր ձեւերը—թէ ասիական

ու եղիպտականը և թէ յունականն ու հսօմէականը. որ մերժումէր նաև անմերժելին, այն է՝ կեսարներին աստուածային յարդանը ու երկրպագութիւն տալը և այդ այն կեսարներին, որոնք հսօմէական պետութեան մարմնացեալ զօրութիւնն էին համարվում: — Առաջ հրէաների ծէսերը նոցա մէջ առաջին տեղն էր բոնում թլիփատութեան ծէսը, որ գառել էր կոպիտ ծաղրածոթեան ու ծանակի յարակայ առարկայ: Պա ի՞նչ միտք ու խորհուրդ կարող էր ունենալ. կամ ի՞նչ միտք ունէր և ի՞նչ խորհուրդ խողից փախչելը, որ այսպէս ասած՝ ժառանգական ախտ ու երկիւղ էր գարձել, որի համար իրանց վիրայ կրօնական պարտականութիւն էին զրել նորա մսից չուտել: Ըարաթի խիստ պահելու սովորութիւնը հսօմայեցոց հասկացողութեամբ ծուլութիւն անելու պատրուակ էր: Հսօմայեցի երիտասարդները զուարձանումէին շարաթու նաւակատեաց ժամանակ Հետմայի նեղ ու ծուռ փողոցներում թափառելով զննումէին, թէ ի՞նչպէս նոցադամրարը աղօտ լուսի հետ զազրահոտութիւն էր արձակում, թէ ի՞նչպէս այդ տների (հրէից) բնակիչները աղօթը էին մրմնջում բարձրաց շրմանաւ: և կամ Ովիդէոսի նման ճիգն էին թափում մի բան գտնել Սինադոգում, որ ցցց տան, թէ նորա այետեղ հաւաքվումն ո՛չ թէ աղօթելու համար, այլ զուարձանալու: Հինգշարթի առուր պահքն էլ մի այլ կողմից նոցա սրախօսութեանց առարկայ էր գարձել: Արձ ասած՝ հրէան գարձել էր հասարակութեան հանապազօքեայ զուարձութեան նիւթ, ծանակի առարկայ և այսն կատականաց. իսկ թէատրոնները թնդումէին բարձրացած բրիջից ու ծիծաղից, երբ նորա իրանց ներկայացումների ժամանակ ծաղրումէին հրէաների կրօնը, չընայելով՝ որ շատ անգամ՝ այդ ներկայացումներն անբովանդակ և անհեթեթ բաներ, իսկ նոցա կարծեցեալ սրախօսութիւնները—թոյլ և բուժ էին լինում:

Երբ շարաթ օրերը գոռողամիտ հսօմայեցին անց էր կ'նում փողոցով, յակամայից նորա աչքին էր ընկնում յուղայականութիւնը իւր ժամկած կրպակիներով. նա տեսնուումէր, թէ ի՞նչպէս հրէան շրջումէր անհող իւր տօնական տարաշխարհիկ հանգերնը հազած: — Հրէաներն օտար էին օտար երկրում, զուրկ ամենայն համակրութիւնից, ատելի ամենքին և խոր թագուած արհամարհանաց մէջ. սակայն քանի որ նորա կային և զեռ նոցա մէջ երեւումէին, կարծես լսելեայն ասումէին, թէ Հոռմի անկման և իւրեանց առաջարութեան ժամանակին առանել քան զառաւել մերձենուումէ իւր կատարմանը: Հրէաները սերտ կապուած էին միմեանց հետ, մէկ մէկի շատ առատաձեռն էին և մի և նոյն ժամանակ սաստիկ ատումէին ամեն բան, ինչ որ օտար էր: Նորա ո՛չ ուտում և ո՛չ քնումէին օտարի հետ, իւրեանց եկամուտներին (նոր հաւատացեալներին) նախ և առաջ ուսուցանումէին անարդել կուսրերը, հրաժարուել իրանց երկրից և խզել այն կապը, որ կապումէին նոցա իւրեանց ծնողների, զաւակների և տոհմի հետ: Այդ բաների համար յանդիմանվումէին նորա: Բայց հրէան որպէս Յուղայի ազգ նախասահմանեալ էր միայն Պաղեստինի համար: Հեթանոս երկրում

նա ներկայանումէ մեր աշքին մի բացասական տարր, որի ամեն մի արարքը, ամեն մի շարժումն իւր վերայ է դարձնում հասարակութեան ուշադրութիւնը, — Հոռվմայեցի երգիծարանները կամենալով ցոյց տալ, թէ ի՞նչ աստիճանի ատելութիւն էին թագցնում հրեաները իւրեանց սրտի մէջ դեպի օտարները, շատ անգամ շափականցութեանց էին դիմում։ Նոցա կարծիքով հրեաների ատելութիւնն ու թշնամութիւնն այնքան մեծ էր, որ մինչև անգամ հրաժարվումէին այլադաւաններին ճանապարհ ցոյց տալ և նոցածարաւիներին պազ աղբիւրի տեղն ասել։ Ըստ Տացիափի, սորա բացատրութեան համար և՛ քաղաքական և՛ կրօնական պատճառներ կային։ Մոլուս ջանալով հրեց աղջին անխառն և անջատ պահել ուրիշ աղջերից, նոցա համար այնպիսի օրէնքներ ու ծէսեր էր սահմանել, որ բոլորովին հակազիր էին ուրիշ աղջերի օրէնքներին ու ծէսերին, և նոքա անսուրբ էին համարում այն, ինչ որ սուրբ էր համարվում ուրիշների մէջ, օրինաւոր էին համարում այն, ինչ որ պղոց մէջ խոտան էր համարվում և զղուելի։ Այդ էր պատճառը, որ այս աղջը ուրիշներից ո՛չ յարգանք և ո՛չ կարեկցութիւն էր գտնում։ Եւ երբ պատմիչը պատմումէ, թէ ի՞նչողէս Տիբերիոս կայսրը նոցա բիւրերով էր հալածում Սարգինիաւ որի սարսափելի, անտանելի կիման կարող էր նոցա զիլոազին սպառել, առանց ամաչելու կիւնիկան հեռնութեամբ առումէ, թէ նոցա այնտեղ հիւրընկալիցին անհաջող է բարեւունական բարեւուն։ Այլ սակայն հրեաներն ապրումէին նոցա մէջ։ Առաջին հրեապանդուստները վաղուց էր, որ իւրեանց քայլերն ուղղել էին դեպի այն ժամանակուայ աշխարհի մայրաբաղաքը, Գիտնաք, որ Պամպէոսի, Կասսիոսի և Անտոնիոսի օրերում մշած պատերազմների ժամանակ հրեաներից շատերը գերի գնացին և վաճառուեցան՝ որպէս ստրուկներ, — Ընդհանրապէս խօսելով, հասարակապետական դասն աւելի թշնամարար էր վարվում հրեաների հետ, քան կեսարները։ Հրեայ ստրուկները Հոռվմի մէջ անօգուտ անշահ և մի և նոյն ժամանակ մեծ հոգացողութիւնների մասին, որոնք Հոռվմի մէջ անօգուտ անշահ համարվում։ Նոքա այնպիսի անընկճելի յամառութեամբ կապուած էին իւրեանց պապենական սովորութիւնների հետ, որ անհնար էր նոցա յարմարացնել հեթանոսական տնտեսավարութեանը կամ փոխել նոցա բնաւորութիւնը։ Թէ նոքա որպիսի ընդդիմադրութիւնն էին ցոյց տալիս, այդ երեւումէ Յովուէփոսի այն պատմութիւնից, որ նա արել է մի քանի իրան յայտնի քահանաների մասին, որոնք Հոռվմի գերութեանը մատնուած ժամանակ բացի թղից և ընկուղից ոչինչ չէին ուտում, վախենալով, թէ հեթանոսների պատրաստած կերակուրն ուտելով, պղծուին, Հոռմայեցի գերեզմաններին աւելի խելացութիւն էին համարում հրեայ ստրուկներին աղատութիւն շնորհել աննշան գերեզին և փրկանք ստանալով և շատ անգամ էլ առանց փրկանքի արձակել, Աղատութիւն ստացած հրեաները Հոռմի մէջ հրեց համայնքի միջուկն էին կաղմում և լաւ ցոյց էին տալիս այդ համայնքի աղջային բնաւորութիւնը, Նոքա սովորաբար աշխատասէր, ժուժկալ և գործօն էին, ժամանակ անցնելուց յետոյ նոքա հարստութիւն էլ

ձեռք բերին։ Ծուտով աւելի լաւ գրութիւն ունեցող գաղթականներ աւելցրին նոցա թիւը։ Սակայն նորա ազգայնական գրութիւնը շատ յէտ էր մեռմ իրանց այն կրօնակիցների գրութիւնից։ որոնք ուրիշ երկրներում էին ապրում։ Յուդայի որդոց թիւը Օգոստոսի ժամանակ հասնումէր 40.000 և Ցիրերիոսի ժամանակ 60.000 ի։ ուրեմն բնականաբար նորա իւրեանց ներկայացուցիչներն ունեին վաճառականների, զրամատէրերի, գրադէտների, նաև գերասանների շրջանում։ Այս քաղաքում, ուր բոյն էին դրել պէս-պէս արատներ նորա հանգիպումէին իւրեանց շրջանին պատկանող այնպիսի անդամների, որոնց կրօնական կողմը բաւականին անմիմիթար դրութեան մէջ էր։ Նոցա մէջ կային և այնպիսիները, օրոնք ոչ միայն ընդունակ էին շրրջապատողների սովորութիւններին շուտով յարմարուիլ, այլ և անառակութեամի ու շուայտութեամի գերազանցումէին նոցա։ Բայց ինչ էլ որ անէին այդ անմիտները, ի զուր էին աշխատում ցոյց տալ, թէ իրանք հրէից ազգին չեն պատկանում։

Օգոստոսն որոշել էր հրէաների բնակութեան համար առանձին քաղաքամասն, ուր նորա մշտական բնակուելու էին, այն է՝ չորեքտասաններորդ շրջանը յայնկըս Ցիրերոսի, որ Ատտիկանի զառիվայրից սկսած իւր մէջ էր բովանդակում ամբողջ այն գետինը, որ ընկած էր Ցիրերոսի ուղղութեամի և նորա սահմանից այն կողմը, ուր թափում էին Օստիուից եկած նաւակների առաքանքները։ Այդ բնչպէս երեւումէ՝ քաղաքի ամենազքատ մասն էր, ուր բնակութիւն էին հաստատել փերեզակներ, լուցկիավաճառներ, ապակեվաճառներ, մաշուած զգեստներու անպէտք իրեղեններ ծախսղներ։ Այդ քաղաքամասնում գտնուած հրէից հանգստարանը զեղեցիկ վկայ է նոցա աղքատիկ գրութեան։ Խնչպէս նորա ընդհանուր տեսքը, նոյնպէս և նորա գերեզմանաբարերը շատ աղքատն են, այստեղ չկան ոչ մարմարիսնի և ոչ նշարների հետքեր, բացի եօթնջանեան աշտանակի կոպիտ նկարից, որ ներկուած է կարմիր ներկով։ Հրէաների միւս թաղն այնտեղ էր, ուր Ապիեան Ճանապարհը մտնում էր քաղաք։ Բայց այդ տեղերի մօտ բնակութիւն են ունեցիլ աւելի հարուստ հրէաներ ևս, որովհետեւ այնտեղ գտնուած գերեզմանատան մէջ գեղանկար պատկիրներ և մինչև անդամ առասպեկտական նկարներ կան, որոց նշանակութիւնն ու խորհուրդը ցարդ պարզաբանած չէ։ Հրէից երրորդ գերեզմանատեղին քրիստոնէական հին ստորերեցեայ գամբարանների, կատակումբանների մօտ էր։

Բայց ժողովարանների տեղադրութեանը նայելով պէտքէ կարծել, որ Հոօմի հրէայ բնակիչները սփուռւած էին քաղաքի բոլոր և մինչև անգամ ամենալաւ թաղերում։ Արձանագրութիւնների շնորհիւ գտնուած է ոչ մի-այն եօթն ժողովարտների գոյութիւն ունենալը, այլև նոցա անունները։ Սոցանից երեքը կրումէին Օգոստոսի, Ազրիպատսի և Առղումնիոսի ա-նունները կամ նորա համար, որ այդ անձինը նոցա հոգանաւորումէին և կամ նորա համար, որ նոցա աղօթաւորները, ծխականները գլխաւորապէս այդ մարդկանց ծառայողներն էին։ անկատկած կային և աղ ժողովարան-

ներ, որոց անուները գտնուած չեն, Անցնելով մի գերեզմանատնից միւսը և զննելով մեսեալների տապանագրերը, մենք կարդացած կը լինենք Խորա-րայէլի պատմութիւնը կեսարների օրերում և ծանօթացած կը լինենք այն ժամանակին, երբ կապեալն Պաւղոս ոտքը դրեց Ետալիոյ հողի վերայ, Զորօրինակ, մի տապանագրից իմանումնենք, որ երբ Պօղոս առաջեալը Դիոսկորա էր գնում, ճանապարհին իջաւ և Սիրակուսա և երեք օր անց կացրեց Հրէից համայնքի մէջ, Երբ Պատիողոսում նա ափը դուրս եկաւ, այնպիսի Հրէաների մէջ ընկաւ, որոնք Հոօմում բնակուողներից յետոյ աւագագոյնն էին համարվում, ուր քրիստոնեայ Հրէաների սիրառատ հիւ-րընկալութիւնը պահեց նորան առաջիկայ շարաթ օրը, Երբ Հոօմի Ճա-նապարհով ուղերուելիս հասաւ Կապոյա, այնտեղ էլ Հրէաների հանդի պեց, ինչպէս իմացվումէ մի տապանաքարից, որի տակ թաղուածը Հրէա-ների արքոն և ժողովարանապետ է եղել Կապուայում, Քաղաքին մօտենալիս՝ նա մի ժողովարան գտաւ, Հրէական գասը Հոօմում էլ այն կազմակեր-ութիւնն ունէր, ինչ որ ուրիշ կողմերում, Այսպան երկար դարեր անց-նելուց մեր ականջին տարօրինակ են հնչում երբ կարդում ենք զա-նազան ժողովարանների արքոնների հոօմէական անուններ, որպիսիք են Կլաուդիոս, Աստերիոս, Յուլիանոս, Վիենոնյ բանը մենք զտնում ենք և ուրիշ տեղերում։ Տապանաքարերի վերայ մենք տեսնումնենք Հրէից ժո-ղովարանների իշխանների անուններ այնպիսի կենտրոններում, որպիսիք են՝ Պօմպէան, Աննուլիան — Հովըրատէսի ծննդավայրը, Հրէից գետնափոր գամբարաններում։ Հրէից արձանագրութիւնների հանդիպոմենք Ափրիկա-յում, Ասիայում, Վիջենքում, Կարելի է ենթազրելու թէ նորա զտնվում էին մին-չե անդամ այնպիսի տեղերում, որ գետ այժմ արձանագրութիւններ չեն գտնուած Հրէաների՝ հին ժամանակներում՝ այնտեղ զտնուելու մասին։ Այս բանը կարելի է յիշել շենուելով այն փաստի վերայ, որ հոօմոյեցիների վաճառահանութիւնը մեծ և ձգողական զօրութիւն ունէր, որի պատճառով մինչեւ Քրիստանիա նշանաւոր գաղթականներ յայտնուեցան, պէտք է յիշել նաև այն, որ զերեզմանների մէջ մենք զտնումնենք ասորի վաճառականնե-րի։ տապանաքարեր ինչպէս Ապանիայում, (ուր Պօղոս առաքեալը յոյս ունէր քարոզել նաև իւր խկական հարենակիցներին), նաև Գերմանիոյ ամենաշեռաւոր մասերում։ Այսպիսով հիմնովին հաստատվում են Յով-սեփոսի և Փիլոնի վկայութիւնները, թէ Խորայէլը պանդխտած էր այն ժա-մանակուան յայտնի եղած աշխարհի ամեն մասերում։

Հրէութեան տարածուելուն արգելք գնող օրէնք չունէին, Նթէ ի հաշիւ շառնենք այն կարճ ժամանակամիջոցը, Երբ Տիրերիոս (19 թ. Ք. յ.) Հրէաներին դուրս վանեց Հոռովմից և նոցանից կ400 հոգի ուղարկեց Արգի-նիա աւազակների գէմ կոռելու, — կարող ենք ասել, որ Հրէաներին ոչ միայն կատարեալ աղատութիւն էր շնորհուած, այլ և բացառիկ ասանձնա-շնորհութիւններ էր պարգևած, Կասարի և Օգոստոսի թաղաւորութեանց

ժամանակ կրօնական հրովարտակներ հրատարակուեցան, որոնք նոցա տալիս էին ինչպէս կրօնական լիուլի աղատութիւն, նոյնպէս և համայնական իրաւունքը, Այս օրէնքների զօրութեամբ չեին կարող արդելք լինել, որ նոքա իրանց կրօնական հանդիսակատարութիւնները կատարեն, շարաթն ու պահքը սրբութեամբ պահեն։ Նոցա թղթ էր տուած, որ իւրաքանչիւր տարի Երուսաղէմի տաճարի տուբքն ուղարկեն և եմէ քաղաքական ատեանները մերժէին տալ այդ գումարը, սրբապղծութիւն գործած կըլինէին։ Արովչեաւ չրէաները հրաժարվութէին շարաթ օրը զէնք կրելուց կամ պատերազմ գնալուց վասնորոյ նոցա աղատութէին զինուորական ծառայութիւնից։ Այդպիսի խկ հիմնաց վերայ նորա իւրեանց տօներին աղատէին զատաստանատեղիներ գնալուց։ Մինչեւ անգամ Օգոստոս հրամայել էր որ երր քաղաքացիների հացի և զինու բաշխումը շարաթ օր պատահէր, հրէաների բաժինը հետեւեալ օրը տային։ Հոռվմէական իշխանութիւնը մի օրէնք էր սահմանել, որի զօրութեամբ Անտիոքի հիմնարկող Աելեկիոս Ա. հրէաներին Փաքր - Ասիայում և Ասորիքում իւր շինած քաղաքների մէջ բնակուելու իրաւունք էր շնորհում։ Այս իրաւունքները հաստատեցին Անտիոքականոս և Տիտոս հրէական վերջին պատերազմից յետոյ ևս, թէե քաղաքները մեծ ընդդիմագրութիւն էին ցոյց տալիս այդ բանին։ Զարմանալու հարկ չըկայ, որ հրէաները Անտիոքի մահուան պատճառով մի քանի գիշեր շարունակ հաւաքվում էին այն խարսյկի շուրջը, որի վերայ այրել էին նոցա բարերարի զին, տիտոր մեղեղիներ էին երգում։ Աաղմոսի միջից և յուղարկաւորութեան սրատաձմիկ հանդէսներ էին կատարում։ Տիրերիսոսի բռնած ընթացքին էլ պէտք է վերագրել Աէեանուսի աղդեցութեանը, որին շատ սիրում էր կոյսրը, և երբ այդ մարդու աղդեցութիւնը հեռացաւ նորանից, այդ հալածանքն էլ վերացաւ հրէաների վերայից։ Բացի ոյդ րանից դորա համար կային մի քանի մասնաւոր պատճառներ, որոնց մէկն էլ այն էր, որ այդ ժամանակ հասարակութիւնը թշնամական աչքով էր նայում նոցա վերայ, և ինչ ծէս որ այլանեռ և ստար էր, շարժումէր նորա ատելութիւնը։ Ի վերայ այսրամենայնի, դոցանից զեռ չի կարելի եղաքացնել, թէ ոյդ զէպլքի պատճառով բոլոր հրէաները հաօմը թողին, ընդհակառակն շատերն այնտեղ մնալու գաղտնի միջացներ հնարեցին։ Պորանից քսան տարի յետոյ Փիլոնը Հոռվմի մէջ գտաւ բազմաթիւ համայնք, որ բոլորովին պատրաստ էր նորան պաշտպանելու այն առաքելութեան մէջ, որ ձեռնարկած էր իւր եգիպտական հաւատակիցների օգտի համար։ Այսպիսի ժամանակաւոր ճնշումներն ու նեղութիւնները հրէից արտօնութիւնները չըջնջեցին, և կայսրներն իւրեանց բարեհաճ ուշագրութիւնը նորանց վերայից չըպակասեցին։